ПОЛИТОЛОГИЯ

ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կ. Վ. Ալթունյան

Երևանի պետական համալսարան
katya.altunyan@ysu.am

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում լուսաբանվում են քաղաքական էլիտայի հետազոտության արդի մեթոդաբանությունն ու քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը ժողովրդավարական հասարակություններում: Քաղաքական էլիտայի հավաքագրման ձևայնացված կառուցակարգերի և սկզբունքների ուսումնասիրությունը կարևորվում է, հատկապես, պետական կադրային քաղաքականության մշակման, պետական կառավարման ու ժողովրդավարացման խնդիրների համատեքստում: Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի ուսումնասիրության նոր մեթոդաբանությունից բացի անհրաժեշտ է գործընթացը բաժանել փուլերի, ինչպես նաև կատարել դրանց ինստիտուցիոնալ կողմերի վերլուծություն ու մոդելավորում: Այս և հիմնախնդրին առնչվող այլ խնդիրների վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն մտքին, որ պետական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և քաղաքական էլիտայի ձևավորումը ժողովրդավարացնելու գործընթացներն արագացնելու համար անհրաժեշտ է ապահովել՝ *առաջինը*, քաղաքական և սոցիալական ինստիտուտների՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ ուղիներգործառությունը, և *երկրորդ*՝ սինքրոնիզացնել քաղաքական էլիտայի հավաքագրման և պետական կառավարման սկզբունքները ժողովրդավարացման գործընթացի հետ:

Հիմնաբառեր՝ էլիտա, քաղաքական էլիտայի հավաքագրում, պետական կառավարման արդյունավետություն, քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելներ, հավաքագրման համակարգեր և փուլեր, հավաքագրում, բյուրոկրատիա, ժողովրդավարացում:

ՀՀ ժողովրդավարացման գործընթացն արագացնելու նպատակով քաղաքական էլիտայի ձևավորման գործընթացի համակողմանի ու խորքային ուսումնասիրությունը պետք է լինի շարունակական: Նման անհրաժեշտությունը բխում է ժողովրդավարական կառավարման այն առանցքային կողմերից, որոնց շուրջ գիտական բանավեճի ծավալումը կարող է հեռանկարում երևույթների ընկալման նոր հորիզոններ բացել: Այդ կողմերից մեկն ուղղակիորեն առնչվում է պետական կառավարման արդյունավետության վրա ազդող գործոնների վերլուծության անհրաժեշտությանը: Գործոններից ***առաջինը*** *վերաբերում է քաղաքական էլիտայի հավաքագրման ժողովրդավարական ինստիտուտների անարդյունավետ գործառությանը, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ դրանց ձևականությանը:* ***Երկրորդն*** *առնչվում է պետական կառավարման ժողովրդավարական ձևին հատկանշական սկզբունքների անհամապատասխանությանը քաղաքական էլիտայի հավաքագրման կառուցակարգերին (մեխանիզմներին):*

Քաղաքական էլիտայի ձևավորման և ժողովրդավարացման ուսումնասիրություններ հայ քաղաքագիտական հանրույթի շրջանակներում իրականացվել են 1990-ականներից ի վեր [1]: Այդուհանդերձ, ՀՀ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի տեսական և հատկապես էմպիրիկ գիտելիքները խորացնելու անհրաժեշտություն կա: Թեև առկա է էլիտաների ուսումնասիրությունների հարուստ փորձ ունեցող երկրների հետ համաժամանակ քայլելու ցանկություն, էլիտաների ուսումնասիրությունների զարգացման արդի փուլում մենք մի փոքր դանդաղում ենք: Հայկական էլիտայի ծագման և ձևավորման պատմական ու քաղաքական գործոնների ու պատճառների վերլուծությունները ոչ միայն շատ չեն, այլև համակարգված չեն:Ավելին, չկան նաև խորհրդային քաղաքական էլիտայի մասին այդպիսիք, և դա այն պարագայում, որ խորհրդային հասարակության ժամանակներից պահպանվել են քաղաքական գործընթացների ու հայ քաղաքական առաջնորդների մասին հսկայական արխիվային նյութեր: Այսօր էլիտաների հետազոտության նոր ուղղությունների շարքում արժևորվում են որակական նոր մակարդակի ուսումնասիրությունները (հավաքագրման սկզբունքների ու ուղիների, վարքաբանության և էլիտայի ինքնապահպանման խնդիրների շուրջ), որոնք **որակական վերլուծություններ** անելու միանգամայն նոր գործիքներ են առաջարկում [2, էջ 17]: Քաղաքական էլիտայի հավաքագրման համակարգի (սկզբունքների և կառուցակարգերի) առանձնահատկությունների վերհանումը գործնականում թույլ է տալիս ոչ միայն խմբավորել դրանք՝

հիմնավորելով կոնկրետ մոդելի ընտրության ու պետական կառավարման արդյունավետության փոխպայմանավորվածությունը, այլև՝ ձևայնացնել հավաքագրման գործընթացը [3, էջ 3–8]: Առաջնորդվելով այդ տրամաբանությամբ՝ ռուս ակադեմիկոս Ա.Ի. Սոլովյովը հեղինակել է հավաքագրման չորս՝ **ունիվերսալ** (որի մեջ մտնում են նաև բաց և փակ համակարգերը), **ազգային, ռեգիոնալ և տեղական** մոդելները՝ հավաքագրումը սահմանելով որպես իշխանական աստիճանակարգությամբ բարձրանալու բազմագործոն հարաբերությունների ու կապերի բարդ համակարգ [4, էջ 13]: ԱՊՀ երկրների էլիտաներն ուսումնասիրող ակադեմիկոս Օ.Գամանն առանձնացրել է էլիտայի հավաքագրման երեք՝ **բյուրոկրատական, կլանային և խառը մոդելները**՝ հիմք ընդունելով վերջիններիս կազմակերպչական և տարվող քաղաքականության կորելացիաները [5]: Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի մոդելավորման տեսաբաններից է նաև հայտնի Չիկագոյի դպրոցը ներկայացնող Բ. Գարասիմինը: Մոդելավորման հիմքում դնելով դեպի էլիտա «ձգտելու» և «ներգրավելու» իրական կառուցակարգերն ու դրանց վերլուծությունը՝ հեղինակի համոզմամբ ցանկացած հասարակություն ունի կառուցվածքային, կազմակերպչական անդամակցության միայն իրեն բնորոշ ձևեր, քաղաքական և մասնագիտական դերերի բաշխման չափանիշներ, սակայն շահադրդման («դրդիչ» գործոններ) ու սոցիալական տարբեր ցանցերի միջոցով քաղաքական էլիտայի շարքերը համալրելու տրամաբանությունը նույնն է բոլոր ժամանակակից հասարակություններում:

ԱՊՀ երկրների քաղաքական էլիտաների հավաքագրման խնդիրներով զբաղվող ռուս հետազոտող Օ.Գամանն իր հեղինակած մոդելների դասակարգման մեջ (2007թ.) *Հայաստանը դասում է հավաքագրման խառը համակարգերին* Ռուսաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կողքին [6, էջ 136–157]: Այս իմաստով կարևոր ենք համարում անդրադառնալ ՀՀ քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ ուղիների գործառության և կառուցվածքային փոփոխությունների շարժընթացին:

Էլիտաների մասին տեսությունների համաձայն՝ ժողովրդավարությունը կառավարման այն համակարգն է, որում քաղաքական իշխանությունն ունի միջնորդավորված բնույթ՝ քաղաքական էլիտայի հավաքագրման ուղղակի ու անուղղակի ձևերի, ձևայնացված ու ոչ ձևայնացված կառուցակարգերի գոյության և դրանց գործառության շնորհիվ: Իշխանության գալով՝ քաղաքական էլիտան դե յուրե ստանձնում է պետական կառավարման և քաղաքականության արարման գործառույթները, կրում վարչաքաղաքական պաշտոններից բխող ու օրենքով սահմանված լիազորություններ, պարտավորություններ և պատասխանատվություն [7]:

Քաղաքական էլիտան կարելի է սահմանել որպես քաղաքական ինստիտուտներում գործառող ու քաղաքական գործընթացներին մշտական մասնակցություն ունեցող մարդկանց տարբերակված համախումբ: Այս իմաստով, ինչպես քաղաքական էլիտան, այնպես էլ վերջինիս հավաքագրման գործընթացը ժողովրդավարական երկրներում կրում է ինստիտուտցիոնալ բնույթ այն իմաստով, որ իրականացվում է ձևայնացված խմբերի ու կառույցների մեջ միավորված մարդկանց կողմից: Տրված սահմանման շրջանակներում հավաքագրման գործընթացը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով. ինստիտուտների միջոցով պահպանվում են քաղաքական էլիտայի կառուցվածքը և ձևավորման ձևայնացված կարգը: Այս դեպքում քաղաքական էլիտայի հավաքագրման համակարգի տեսակը որոշելիս հաշվի են առնվում քաղաքական էլիտայի տեսակային, կառուցվածքային առանձնահատկություններն ու հավաքագրման ձևայնացված ուղիները, քաղաքական իշխանության ձևը: Այսպես, օրինակ, կայուն և կոնսոլիդացված իշխանություն ունեցող պետական-քաղաքական համակարգերում քաղաքական էլիտայի կազմը, որպես կանոն, հավաքագրվում է նույն ուղով, օրինակ՝ քաղաքական կուսակցություններից (**մոնոարխիկ էլիտա**), ինչպես Սկանդինավյան երկրներում: Այդուհանդերձ, դրանից ուղղակիորեն չի կարելի ենթադրել, որ հավաքագրման տարբեր ուղիներով ձևավորվող քաղաքական էլիտան (**պոլիարխիկ էլիտա**) կոնսոլիդացված չէ և կրում է ապակենտրոնացված բնույթ, որովհետև բոլորն ի վերջո հայտնվում են մեկ կետում, այն է՝ իշխանության բուրգին: Վերջին դեպքում քաղաքական էլիտայի ինտեգրումը կառավարման հիմքում ենթադրում է փոխադարձ վստահության հաստատում, լեգիտիմություն և մի շարք այլ սկզբունքներ: Վերոնշյալ խնդիրների պարզաբանումը հավաքագրման գործընթացի քաղաքագիտական մոդելավորման և կառուցվածքային վերլուծության համատեքստում առանցքային նշանակություն ունի (թեև ինտեգրման խնդիրն ավելի շատ առնչվում է *քաղաքական էլիտայի շրջապտույտին*) և թույլ է տալիս կազմել քաղաքական իրականության փոքրացված պատկերը: Ժողովրդավարական պետություններում քաղաքական էլիտայի հավաքագրման կառուցակարգերի ուսումնասիրության հետ կապված իսկապես կարևոր խնդիրներից մեկը, ինչպես վերը արդեն նշեցինք, առնչվում է հավաքագրման ինստիտուցիոնալ ուղիներին ու դրանց արդյունավետությանը՝ առանձնակի շեշտադրելով *ընտրությունների, բյուրոկրատիայի, քաղաքական կուսակցությունների* վրա, քանզի հենց կայուն քաղաքական ինստիտուտների գործառությունն է որոշում քաղաքական համակարգերի զարգացած լինելու և ժողովրդավարության մակարդակը: Առանձին

երկրների քաղաքական պատմությունն ու կառավարչական փորձը ցույց են տալիս, որ ընտրությունները կատարում են քաղաքական էլիտայի լեգիտիմացման խնդիրը լուծելու ու փոխհամաձայնության (կոնսենսուսի) հաստատման գործառույթները: Առաջնային կարևորելով սոցիալ-քաղաքական դերակատարների պոպուլիստական և գաղափարական փոխհամաձայնության հասնելու հմտությունները՝ ընտրությունները երկրորդական պլան են մղում քաղաքական էլիտայի անդամների հավաքագրման որակական (մասնագիտական) կողմը: Քաղաքական իշխանության համար պայքարի նման տրամաբանությամբ գործառող պետական-քաղաքական համակարգերում ընտրությունները չեն կատարում քաղաքական իշխանության փոփոխման և էլիտայի նորացման կայուն ինստիտուտի իրենց գործառույթը [8, էջ 9]: Տվենտի համալսարանի պրոֆեսոր, կազմակերպական տեսության տեսաբան Ժ.Թոմասսենի համոզմամբ ընտրությունները՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման կայուն ինստիտուտ, արդյունավետ են միայն կոնսենսուսային ժողովրդավարություններում [9, էջ 40]: Այդուհանդերձ, անկախ այն բանից, թե ինչպիսի ժողովրդավարության մասին է խոսքը գնումվ կոնսենսուսային, թե մեկ այլ, ընտրությունները չեն ապահովում գործընթացի ժողովրդավարական բնույթը, որովհետև ավելի քիչ են արտացոլում ուժերի հարաբերակցության փոփոխությունը քաղաքական էլիտայի ներսում: Արևմտյան ժողովրդավարության երբեմնի տեսություններում այդքան արդյունավետ հանրային քաղաքականության իրականացման այդ ինստիտուտը, ինչպես նշում է Ա.Ի. Սոլովյովը, կրում է իմիտացիոն բնույթ և ապահովում է միայն քաղաքական էլիտայի պարզ վերարտադրությունը [10, էջ 14]: Քաղաքական էլիտայի հավաքագրման ներկայացուցչական ինստիտուտների անարդյունավետ գործառության դրսևորումներից մեկը նաև **քաղաքական հավաքագրման** (political recruitment) սկզբունքների ու ուղիների ազդեցության մեծացումն է, որն ի դեպ շատ տարածված է արևմտյան աշխարհի ժողովրդավարություններում [11]: Բացի այդ, քաղաքական էլիտայի հավաքագրման գործառույթը հանրային այլ կառույցների կողմից խաթարում են հենց պետական կառավարման համակարգն ու դրա մեջ մտնող ինստիտուտները: Դրա վառ ապացույցներից մեկը վերջիններիս կից գործող ակադեմիաների ու դպրոցների տարածման փորձն է, որոնք կադրային լրացուցիչ զտիչների դեր են կատարում: Քաղաքական էլիտայի հավաքագրման վերոնշյալ ուղիները դրանով իսկ ոչ թե բարձրացնում են քաղաքական էլիտայի ուղղահայաց մոբիլության մակարդակը, այլ կարևորում են իրենց սոցիալ-մասնագիտական միջավայրից մարդկանց ընտրելու առաջնային

չափանիշը: Այս առիթով Գ.Կ.Աշինը իրավացիորեն նկատում է, որ տվյալ պարագայում կարևորվում է քաղաքական էլիտայի հավաքագրման արդեն իսկ գործող և ինքնապահպանման նպատակին ծառայող կրթությունը, որը մեծ մասամբ բաց է և հասանելի սոցիալական լայն շերտերին [12, էջ 82–99]: Միևնույն ժամանակ հավաքագրման ուղիների նման գործարկումը ներհամակարգային սկզբունքները պահպանելու և փոխանցելու նպատակ է հետապնդում: Բայց դրանք՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման կառուցակարգեր, ընդհանրական բնույթ չեն կրում, որովհետև կրթությունն ու կրթական նման կառույցները բոլոր երկրներում չէ, որ վայելում են բարձր հեղինակություն:

ՀՀ քաղաքական էլիտայի հավաքագրման ամենագործուն ինստիտուտն անկախության առաջին տարիներից եղել է բյուրոկրատիան՝ ի դեմս գործադիր մարմնի [13, էջ 179–187]: Հայ քաղաքական էլիտայի հավաքագրման սկզբունքների շարքում կարևորվել է «կառավարելու» կամ «ղեկավարելու» սկզբունքը: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ կացությունը՝ ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավորների մեծ մասը համատեղել է խորհրդարանական և պետական տարբեր հիմնարկներում, այդ թվում՝ գործադիր իշխանության մարմիններում աշխատանքը: Մասամբ դա պայմանավորված էր նաև խորհրդային իշխանությունից ժառանգություն ստացած պետական կառավարման մարմինների ահռելի թվով (քառասունչորս նախարարություն ու կոմիտե): 1996թ.-ից՝ նախագահի ինստիտուտի ձևավորումից հետո, որպես գործընթացի տրամաբանական շարունակություն քաղաքական իշխանության կենտրոնացմանը զուգընթաց ձևավորվեց մոնոհիերարխիկ քաղաքական էլիտա՝ ամրապնդելով դարձյալ քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական ինստիտուտն ու կլանային-օլիգարխիկ մեխանիզմները: 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ՀՀ փոփոխված Սահմանադրությամբ խորհրդարանի դերի բարձրացման միտումներին զուգահեռ ներդրվեցին քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի և կառավարման վերահսկողության համապատասխան ինստիտուտներ ու կառուցակարգեր (Վերահսկիչ պալատի ստեղծումը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նշանակումը, Քաղծառայության խորհրդի հիմնումը (2002թ.)): Խորհրդարանը՝ քաղաքական էլիտայի կադրային ռեզերվ դարձնելու միտումը նպատակ ուներ թուլացնելու բյուրոկրատական ինստիտուտի դերը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում: Սակայն այդ նպատակին չծառայեց ո՛չ համամասնական ընտրակարգով պատգամավորական տեղերի ավելացումը խորհրդարանում (ԱԺ երկրորդ գումարումից (1999–

2003թթ.) ի վեր), ո՛չ կուսակցությունների մասին օրենքի ընդունումը: Այդուհանդերձ, ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ ուղիների դերն ու ազդեցության մասշտաբներն ընդհանուր առմամբ փոփոխվել են ընտրությունների արդյունքներով [14, էջ 35–47]: Խնդիրը նրանում է, որ ընտրությունները, այնուամենայնիվ, չեն ապահովել քաղաքական իշխանության բաշխումը հավասարակշռության սկզբունքով, որի արդյունքում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացն աչքի է ընկել խառը ձևերի կամ հավաքագրման ուղիներից մեկի բացարձակ գերիշխանությամբ: Լինելով քաղաքական և կառավարչական բարձր պաշտոններ զբաղեցնող ու դրանցից բխող գործառույթներ իրականացնող մարդկանց հարաբերականորեն ինտեգրված խումբ՝ *քաղաքական էլիտան ոչ միայն ղեկավարում է պետական կառավարման համակարգի ինստիտուտները, այլև նույնանում դրանց հետ*: Ուստի, ժողովրդավարական հասարակությունը, պետական ու քաղաքական կառավարման ինստիտուտները գլխավորող և առաջնորդող սուբյեկտ ճանաչելու իրողությամբ է պայմանավորվում քաղաքական էլիտայի ձևավորման ու հավաքագրման գործընթացի մշտադիտարկման և ուսումնասիրությունների անհրաժեշտությունը: Վերջինս կարևորվում է նաև կառավարման արդյունավետության բարձրացման, պետական կառավարման և քաղաքական կառույցների կողմից իրականացվող կադրային քաղաքականությունը գնահատելու տեսանկյունից: Հավաքագրման ձևայնացված կառուցակարգերի և ինստիտուտների գործառության իմաստով քաղաքական **էլիտայի հավաքագրման գործընթացի առաջին** և ամենաակտիվ՝ *սելեկտիվ փուլը* պայմանականորեն կարելի է համարել նորեկների առաջադրումը կամ ընդունումը, որոնց, որպես կանոն, ընտրում և/կամ նշանակում են պետական ու քաղաքական պաշտոններում պաշտոնավարելու նորմատիվային-իրավական սկզբունքների, սահմանադրականության, քաղաքական իշխանության մեջ դիրքավորման ձևայնացված և որակական կողմերի, քաղաքական կառույցներին պատկանելության և մի շարք այլ սկզբունքների համապատասխանությամբ: Ճիշտ է, էլիտայի հետազոտության մեթոդաբանությունը սկզբնապես ենթադրում է քաղաքական իշխանության մեջ դիրքավորման, էլիտայի անդամների ընտրության սկզբունքների ու ձևայնացված ուղիների առաջնային ուսումնասիրություն. այդուհանդերձ, ավելի լայն իմաստով այդ գործընթացի մաս են կազմում նաև (ավելի ճիշտ կլինի ասել՝ տրամաբանորեն հաջորդում են) քաղաքական ծրագրերի մշակումը, տեսլականի սահմանումը, որոնց էլ

հաջորդում են նաև քաղաքական որոշումների ընդունումը, քաղաքականության կատարողականի հանդեպ քաղաքական և ժողովրդական վերահսկողության համապատասխան կառուցակարգերի գործարկումը: Քաղաքական էլիտայի հավաքագրումը, այդուհանդերձ, պետք չէ սահմանել միայն «լավագույնների» ընտրությամբ կամ նշանակմամբ (*սելեկցիոն փուլ*), որովհետև այդ դեպքում գործընթացը սահմանափակվում է անհատի կամ նրանց խմբի որակներով ու անձնական հաջողություններով: Մինչդեռ քաղաքական պաշտոն ստանալու և այն զբաղեցնելու համար պահանջվում են հանրային նշանակության գործառույթներ կատարելու պատրաստականություն ու կարողություններ: Վերջիններս հավաքագրման առաջնային չափանիշների շարքում կարևորում են քաղաքական պայքարի դուրս գալու ու մրցակցելու, արդյունավետ հաղորդակցվելու հմտությունները, մարդկային և ֆինանսական ռեսուրսները, համապատասխան դաստիարակությունն ու ներքին էթիկան: Պետության կառավարման ցանկացած ձևի կամ քաղաքական վարչակարգի արդյունավետությունն իր հերթին պայմանավորված է ոչ միայն քաղաքականության սուբյեկտների ձևավորման ձևայնացված կառուցակարգերի, ինստիտուտների գործառության, այլև քաղաքականության դերակատարների վարքաբանական մոդելների, կառավարման սոցիալ-տնտեսական, վարչակազմակերպչական և սոցիալ-հոգեբանական մեթոդների բնույթով: Ավելին, նշված խնդիրների համատեքստում՝ հատկապես հետխորհրդային տարածքի պետությունների (այդ թվում՝ Հայաստանի) դեպքում, կարևորվում է նաև քաղաքական էլիտայի հավաքագրման չձևայնացված կառուցակարգերի, հարաբերությունների ու էլիտար ցանցերի ուսումնասիրությունը [15]: Այստեղ պետք է հավելել նաև այն, որ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի հետազոտությունը չի սահմանափակվում միայն քաղաքական էլիտային բնորոշ հատկանիշների վերհանմամբ: Այն ենթադրում է նաև քաղաքականություն գնացող մարդկանց մոտիվացմանը, նպատակային գործունեությանը, հանրային կապերին և մի շարք այլ հարցերին անդրադառնալու անհրաժեշտությունը: Այսպիսով՝ վերոնշյալից հանգում ենք, որ քաղաքական էլիտայի հավաքագրումը սոցիալ-քաղաքական բարդ գործընթաց է և բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի: Այս ուսումնասիրության կարևոր կողմերից մեկը վերաբերում է քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի և ժողովրդավարական սկզբունքների ու կառուցակարգերի անհամապատասխանության խնդրին: Հաշվի առնելով, որ քաղաքական էլիտայի հավաքագրման համակարգերը «մաքուր»

(անխառը) ձևով չեն հանդիպել ոչ մի պետական-քաղաքական համակարգի շրջանակներում՝ դրանք առաջնահերթ չիդեալականացնելու նպատակով (իդեալական տիպաբանության պրակտիկան ծագում է դեռ անտիկ ժամանակներից) քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի հետազոտության արդի փուլում այլևս արդիական չենք համարում ***հավաքագրման բաց և փակ համակարգերի*** դասակարգումը: Ավելին, համաձայնելով, որ նույնիսկ արդի ժողովրդավարական հասարակություններում, քաղաքական էլիտայի հավաքագրման բաց (ժողովրդավարական) և փակ համակարգերի սկզբունքներն ու ինստիտուտները կարող են համահարաբերակցվել (**Բ.Ռոքմեն**), կարևորում ենք հիմնական անհամապատասխանությունների ուսումնասիրությունը: Այդ նպատակին հետամուտ լինելով՝ կարևոր է ոչ միայն վերհանել այն հիմնական, ուղղորդիչ սկզբունքներն ու ուղիները, որոնց միջոցով քաղաքական էլիտան համալրվում է նոր անդամներով, այնուհետև համահարաբերակցել դրանք քաղաքական իշխանության համար պայքարի և քաղաքական կարիերայի կառուցման ձևերի հետ, այլ նաև արագացնել հասարակության արդիականացման գործընթացը՝ ռազմավարական մտածողության սերմանման միջոցով: Միևնույն ժամանակ, ընդունելով, որ քաղաքական էլիտայի հավաքագրման ժամանակակից ժողովրդավարական համակարգերում ոչ միայն բացառված չեն, այլև գործում են ինչպես բաց, այնպես էլ փակ համակարգերի սկզբունքները, կարելի է ենթադրել, որ քաղաքական էլիտայի հավաքագրման արդի խնդիրը կապ ունի ոչ այնքան հավաքագրման համակարգի բաց կամ փակ լինելու կամ բուն ինստիտուտների ու սկզբունքների, որքան *քաղաքական էլիտայի գործառության արդյունավետության* հետ: Վերջապես, հաշվի առնելով, որ այսօր գործունեության գրեթե բոլոր, այդ թվում՝ քաղաքականության ու պետական կառավարման բնագավառներում, գերակայում է գործառության օպտիմալ մոդելներ գտնելու մարտավարությունը, ինքնին անիմաստ է դառնում ունիվերսալ/ իդեալական մոդելների վերհանման ցանկացած փորձը:

Ինչպես երևում է վերոշարադրյալից, ժողովրդավարությունն ու պետական կառավարման արդյունավետությունը ասոցացվում են նաև քաղաքական էլիտայի *արդյունավետ (effective) գործելու և արդյունարարության (efficiency)* հասկացությունների հետ: Թեև հայերենում «արդյունարարություն» և «արդյունավետություն» հասկացությունները նույնացվում են միմյանց հետ, դրանք սկզբունքորեն տարբերվում են արևմտյան քաղաքական և կառավարչական պրակտիկայում: Քաղաքական էլիտայի արդյունավետութունը պայմանավորող գործոնները

կարելի է բաժանել երկու խմբի: **Կառավարչական գործոնների** շարքում կարևորվում են քաղաքական էլիտայի կառուցվածքային, կազմակերպչական, գործառական, հաղորդակցական, իսկ **քաղաքական գործոնների**՝ էլիտար տարբեր խմբերի և ոչ էլիտաների հետ փոխհարաբերությունների, կադրային քաղաքականության, քաղաքական շահադրդման և մի շարք այլ կառուցակարգերի ուսումնասիրությունը: Թ.Արչերն իր՝ «Արդյունարարության տեսություն» աշխատությունում արդյունարարության գնահատման չափանիշների շարքում առանձնացնում է քաղաքական էլիտայի՝ արտադրանք (product) տալու կարողությունը, իշխանական լիազորությունները կատարելու արհեստավարժությունը [16, էջ 63]: Հեղինակը դրանց հավելում է նաև քաղաքական էլիտայի՝ սոցիալական և քաղաքական էվոլյուցիոն գործընթացները հասկանալու, դրանք արդյունավետորեն կառավարելու, ինչպես նաև սեփական արդյունարարությունը բարձրացնելու նպատակով՝ նոր մարդկանց ներգրավվելու և կազմը թարմացնելու կարողությունն ու հմտությունները: Ի դեպ, քաղաքական էլիտայի արդյունարարության չափանիշների կարևորությունը հարաբերականորեն վերջերս է դարձել քաղաքագիտական քննարկումների առարկա: Էլիտաների հետազոտության ընդհանուր մեթոդաբանության շրջանակներում դրանք թույլ են տալիս վերհանել ինչպես էլիտար մտքի, այնպես էլ քաղաքական էլիտայի կառուցվածքային ու գործառության էվոլյուցիայի ընդհանուր պատկերը: Օրինակ՝ քաղաքական էլիտայի արդյունարարության գնահատումը *«սոցիալական կենսագրությունների» մեթոդաբանությամբ* ցույց է տալիս, որ անկախությունից ի վեր (2014թ.-ի դրությամբ) ՀՀ քաղաքական էլիտայի սերնդափոխությունը դանդաղելու միտումներ ունի՝ համեմատած անկախության առաջին տարիների հետ [17, էջ 22–66]: Քաղաքական էլիտայի արդյունարարությունը *աքսիոլոգիական և կառուցվածքայի-գործառական մեթոդի* շրջանակներում ասոցացվում է էլիտայի՝ ներէլիտային ու հասարակական արժեքները ձևավորելու, հարաբերակցելու և դրանք փոխհամաձայնացնելու կարողությանը: Էլիտայի տարբեր հատվածների գործունեության ու որոշումների նվազագույն տարբերություններն ապահովող ինստիտուտցիոնալ կառուցակարգերի հաստատումը, ինչպես նաև զարգացման տեսլականը կամ ռազմավարությունն առավելագույնս հասարակության արժեհամակարգին, պահանջմունքներին ու սպասելիքներին համապատասխանեցնելու կարողությունը պետական կառավարման արդյունավետությունը կանխորոշող ժողովրդավարական կայուն գործոններ են: Քանի որ քաղաքական էլիտայի անդամների հավաքագրման ու գործունեության հիմքում ընկած են թե՛ օբյեկտիվ, թե՛

սուբյեկտիվ սկզբունքներ ու արժեքային ուղենիշներ, հարկավոր է խթանել քաղաքական էլիտա այն մարդկանց մուտքը, որոնք ի վիճակի կլինեն ձևավորելու արժեքային միասնական հենք պետական կառավարման ու ողջ քաղաքական համակարգի համար: Սակայն, քաղաքական էլիտայի արդյունավետության չափանիշների սահմանումն ու գնահատումը ընդհանուր առմամբ, ինչպես նկատում են նույն մեթոդաբանությամբ առաջնորդվող մի շարք հեղինակներ, բավականին բարդ գործընթաց է և չպետք է պայմանավորել միայն էլիտայի գործառույթներով և արժեքներով [18, էջ 64]:

Այսպիսով, պետական կառավարման արդյունավետությունը և քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը միմյանց փոխպայմանավորող ու փոխլրացնող երևույթներ են: Այդ մասին են գրում հիմնախնդրով զբաղվող ռուս հեղինակներ Օ.Գամանը, Լ.Սմորգունովը, Ա.Սոլովյովը, Ա.Տուրովսկին, իսկ արևմտյան տեսաբաններից՝ Պ.Նորիսը [19]: Վերոնշյալ կապի գոյությունը փաստող հավելյալ հիմնավորումների թվում կարելի է նաև ավելացնել և դիտարկել հետևյալները՝

– հասարակության շրջանում պետական ինստիտուտների ու քաղաքական կառույցների վարկանիշն ու գործունեությունը՝ քաղաքական էլիտայի որակով որոշելու ու պայմանավորելու անհրաժեշտությունը,

– քաղաքական էլիտայի՝ պետականաշինության և պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման գործընթացը գլխավորելու անհրաժեշտությունը,

– պետական կառավարման մոդելը հասարակության զարգացման ուղենիշներին համապատասխանեցնելու էլիտայի կարողությունը,

– պետական կադրային քաղաքականության և ժողովրդավարական ինստիտուտների ու գործընթացների միջոցով քաղաքական էլիտայի անդամների ընտրության և նշանակման համակարգի արդյունավետության գնահատումը:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ ՀՀ ժողովրդավարացման արագացման ու պետական կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ ուղիների գործառությունն ու հավաքագրման սկզբունքների համապատասխանությունը ժողովրդավարական համակարգի սկզբունքներին ապահովելու համար անհրաժեշտ է.

– հստակեցնել քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի փուլերը (ոչ միայն ձևայնացնելու, ինստիտուցիոնալացնելու և, վերջնարդյունքում, գործընթացին համակարգային բնույթ հաղորդելու նպատակով),

– ապահովել հավաքագրման յուրաքանչյուր փուլի թափանցիկությունը՝ նվազեցնելով «թռիչքային», ոչ ձևայնացված սկզբունքներով ու ուղիներով քաղաքական էլիտայի հավաքագրման և կարիերայի կառուցման պրակտիկան,

– գործարկել քաղաքական էլիտայի արդյունարարությունն ապահովող որակական ու կազմակերպչական այնպիսի սկզբունքներ, որոնք չեն կատարի միայն «ուղեղների որս», այլ կապահովեն նաև ներկայացուցչություն սոցիալական ու քաղաքական համակարգի լայն շերտերից:

Զարգացող հասարակություններում, այս և թեմատիկ այլ խնդիրներին առնչվող ուսումնասիրություններում կարևորվում են նաև քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի թափանցիկությունն ապահովող սկզբունքների ներդրումն ու համակարգային կայունության նախադրյալների ամրապնդումը: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս զարգացած աշխարհի երկրների քաղաքական և կառավարչական փորձը, կայունության հասնելու հաջողությունը պայմանավորող որոշիչ գործոններ հիմնականում համարվում են քաղաքական էլիտայի հավաքագրման համակարգում պաշտոնների շրջանառության ձևայնացված կառուցակարգերի գերակայությունը, փոխհամաձայնությունը, սերունդների կրթումն ու քաղաքական **էլիտայի կոնֆիգուրացիան (կառուցվածքը և ձևը)** [20, էջ 2], ինչպես նաև հավաքագրման ուղիների ինստիտուցիոնալ մատրիցան (քաղաքական ինստիտուտների ձևը):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մ.Մինասյան* Քաղաքական էլիտա,Ե ՊՀ հրատարակչություն, Եր., 2005; *Մարգարյան Մ.* Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2006:
2. *Abbink J., Salverda T.* The Anthropology of Elites: Power, Culture and Distinction, Palgrave Macmillan, 2013.
3. *Понеделков А.В., Старостин А.М.* Формирование путей рекрутации административно-политических элит в современной России, Власть, 06, 2007.
4. *Соловьев А.И.* Процессы формирования правящей элиты в механизмах государственного управления, Материалы научного семинара, Вып. 2(32), Научный эксперт, М., 2010.
5. *Gaman-Golitvina O.* Political Elites in CIS: Recruitment and Rotation Tendencies, Comparative Sociology 6 (2007), PP. 136–157; *Понеделков А.В., Старостин А.М.* Формирование путей рекрутации административно-политических элит в современной России, Власть, 06.2007, С. 5.

6. *Gaman-Golutvina O.* Political Elites in CIS: Recruitment and Rotation Tendencies, Comparative Sociology 6, 2007, PP. 136–157.
7. *Anton Steen* Political Elites and the New Russia: The Power Basis of Yeltsin's and Putin's Regimes, BASEES/Routledge Curzon Series on Russia and East European Studies, London, 2003; *Anton Steen, Vladimir Gelman* Elites and Democratic Development in Russia, by Routledge, 11 New Fetter Lane, London, 2003; *Охотский Е.В.* Теория и механизмы современного государственного управления, Изд. Юрайт, М., 2013.
8. *Laurence LeDuc, Richard G., Niemi Norris* Comparing Democracies: Elections and Voting in the 21th Century, SAGE Publications Ltd, 2010, P. 9.
9. *Jacques Thomassen*, Elections and Democracy Representation and Accountability, P. 40.
10. *Соловьев А.И.* Процессы формирования правящей элиты в механизмах государстяенного управления, Материалы научного семинара, Вып. 2(32), Научный эксперт, М., 2010, с. 14.
11. *Putnam R.* Educational Diversity, Social Cohesion and Social Capital, Paper presented at the meeting of OECD, Dublin, 2004; Pippa Norris, Joni Lovenduski, Why parties fail to learn: Electoral defeat, selective perception and British party politics, Party Politics 10, no. 1, 2004, PP. 85–104.
12. *Ашин Г.К.* Элитное образование, Общественные науки и современность, с. 82–99.
13. *Ալթունյան Կ.* Քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական որոշ ասպեկտների շուրջ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, No 1, Եր., 2017, էջ 179–187:
14. *Маркаров А.А.* Институциональная трансформация в Армении в 1990–2010 гг., «Բանբեր Երևանի համալսարանի», Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 135.6, Եր., 2011, էջ 35–47:
15. *Iskandaryan A., Mikaelian H., Minasyan S.* War, Business and Politics: Informal Networks and Formal Institutions in Armenia, Caucasus Institute, ASCN, Yerevan, 2016.
16. *Timothy Scott Archer* The Efficiency Theory, Manuscript, Ed by Michael Aschenbach, 2010, P. 63.
17. «Քաղաքական էլիտան հետխորհրդային Հայաստանում. Բնութագրիչները և ձևավորման ուղիները» – Եր.: Էդիթպրինտ, 2014, էջ 22–66:
18. *Смирнов Д.С.* Эффективность политической элиты: Аксиологический аспект, Журнал Философия политики и политологии, с. 64.
19. *Гаман-Голутвина О.В., Сморгунов Л.В., Соловьев А.И., Туровский Р.Ф.* Эффективность государственного управления в РФ в 2008г., С. 4; Pippa Noris, Stable Democracy and Good Governance in Divided Societies: Do Power sharing institutions work?, J.Kenedy School of Government, Harvard University Cambridge, 11/8/2005.
20. *Dogan Mattei* Elite Configurations at the Apex of Power, Boston, 2003, P. 2.

ВОПРОС О ФОРМИРОВАНИИ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ РА В РАМКАХ ПРОБЛЕМ ДЕМОКРАТИЗАЦИИ

К.В. Алтунян

АННОТАЦИЯ

В данной статье рассматриваются современные методы исследования и комплекс вопросов рекрутирования политической элиты в современных обществах. В рамках демократизации элитогенеза и государственного управления, наряду с этими и другими вопросами, научная дискуссия включает необходимость рассмотрения существующих формальных механизмов и внедрение демократических принципов в процесс осуществления государственной кадровой политики. Вслед за современной методологией исследования политических элит нужно подчеркнуть еще и необходимость

внедрения поэтапного исследования, анализ институциональных аспектов и практики моделирования и т.д. Из вышеупомянутых аспектов и моделей рекрутинга, представленных в статье, можно заключить, что дальнейший анализ рекрутинга политической элиты Республики Армения (РА) следует продолжать, главным образом, на институциональном уровне. Оценка институциональных аспектов позволяет сделать также вывод, что для достижения быстрого ускорения процессов демократизации элитогенеза и эффективного управления необходимо, во-первых, обеспечить функционирование политических и социальных институтов рекрутинга, улучшить базу фактических данных оценки эффективности институтов, разработать новые механизмы демократического контроля, а также синхронизировать процессы рекрутинга и государственного управления в соответствии с демократическими принципами.

Ключевые слова: элита, рекрутинг политической элиты, эффективность государственного управления, модели рекрутинга политической элиты, фазы рекрутинга политической элиты, рекрутинг, бюрократия, демократизация.

THE FORMATION OF POLITICAL ELITE IN ARMENIA WITHIN THE FRAMEWORK OF DEMOCRATIZATION ISSUES

K. Altunyan

ABSTRACT

This article reviews contemporary research methods and systematic complex of issues on political elite recruitment in modern democratic societies. In relation with other issues within the democratization of the recruitment of political elite and public administration, scientific discussion demands development of new formal procedures and introduction of democratic principles in the implementation of personnel policy. Followed by modern research methodology on political elites, principally on recruitment, introduction of a phased process analysis, institutional aspects and modeling are of particular importance. Due to the aforementioned aspects and recruitment models (in case studies of post-Soviet countries), the analysisof political elite recruitment of Republic of Armenia should be continued. Evaluation of the core aspects of research methodology on political elite recruitment allows to conclude that to achieve acceleration of processes of democratization and effective management, the following issues have a great importance: to strengthen the recruiting functions of the political and social institutions, improve the evidence base on institutional performance, develop new mechanisms for democratic control, as well as to align both recruitment and management processes with democratic principles.

Keywords: elite, political elite recruitment, effective governance, modeling of political elite recruitment, phased process of political elite, recruitment, bureaucracy, democratization.